Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1115-11.11.2016-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքի նպատակը Հայաստանի Հանրապետության պաշտպանության, մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության, կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ (այսուհետ՝ մարտական գործողություններ) զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովող հատուկ համակարգի ներդրումն է:

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով կարգավորվում են մարտական գործողությունների հետևանքով զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են հատուցման հիմնադրամի ստեղծման և գործունեության կարգն ու պայմանները:

Հոդված 2. Շահառուները, հատուցման դեպքերը, հատուցման վճարման հիմքերը և շրջանակները

1. Սույն օրենքի համաձայն, շահառուներ են հանդիսանում այն զինծառայողները, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել մարտական գործողությունների հետեւանքով: Սույն հոդվածի իմաստով՝

1) զինծառայողի կյանքին պատճառված վնաս է համարվում զինծառայողի զոհվելը (մահանալը), կամ անհայտ կորելը.

2) զինծառայողի առողջությանը պատճառված վնաս է համարվում ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով զինծառայողի աշխատունակության կորուստը:

2. Զինծառայող է համարվում՝

1) Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և (կամ) այլ զորքերում ժամկետային պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնող կամ օրենքով սահմանված կարգով պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրաված ու մարտական գործողություններին մասնակցող կամ մասնակցած անձը.

2) տարածքային պաշտպանությանը ներգրավված և մարտական գործողություններին մասնակցած կամ զինվորական ծառայության մեջ չգտնվող ու մարտական գործողություններին մասնակցելու նպատակով կամավորագրված և մարտական գործողություններին մասնակցող կամ մասնակցած անձը (այսուհետ՝ կամավորագրված անձ):

3. Զինծառայողի զոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում շահառու է համարվում զինծառայողի՝

1) ամուսինը.

2) զավակը (զավակները).

3) ծնողը (ծնողները).

4) հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված, կամ մինչեւ 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը եւ եղբայրը, ինչպես նաեւ զինծառայողի խնամքի տակ գտնված 18 տարեկան եւ դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչեւ իրենց 18 տարին լրանալը: Ընդ որում, քույրը և եղբայրը համարվում են շահառու, եթե նրանց ծնողները կամ միակ ծնողը մահացած են կամ ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության առնվազն 3-րդ աստիճանի սահմանափակում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված շահառուների բացակայության դեպքում շահառու է համարվում նաև այլ անձը, եթե դատական կարգով հաստատվել է, որ՝

1) հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ անձը գտնվել է զինծառայողի խնամքի տակ և ունեցել է հաշմանդամություն կամ աշխատանքային կենսաթոշակի իրավունք.

2) խնամել է զինծառայողին մինչև նրա 18 տարին լրանալը:

5. Հատուցման դեպք (այսուհետ՝ Հատուցման դեպք) է համարվում 2017 թվականի հունվարի 1-ից հետո տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում զինծառայողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելը: Հատուցման դեպքը համարվում է տեղի ունեցած, եթե՝

1) զինծառայողը զոհվել (մահացել) է մարտական գործողությունների ժամանակ կամ մարտական գործողությունների ավարտի օրվանից հետո հինգ տարվա ընթացքում՝ մարտական գործողությունների հետեւանքով ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով.

2) զինծառայողը մարտական գործողությունների ժամանակ անհայտ կորելու հետեւանքով օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող եւ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից անցել է 6 ամիս՝ եթե մինչեւ հատուցման գումար վճարելու սկիզբը զինծառայողը չի հայտնաբերվել, կամ

3) զինծառայողը մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետեւանքով ստացել է առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն:

6. Սույն օրենքի համաձայն, հատուցման դեպք չի համարվում այն դեպքը, երբ զինծառայողի զոհվելը (մահանալը) կամ հաշմանդամ դառնալը նրա կողմից կատարված կանխամտածված օրինազանցության հետեւանք է:

Հոդված 3. Հատուցում վճարողը

1. Սույն օրենքով նախատեսված հատուցման գումարները վճարում է սույն օրենքի համաձայն ստեղծված հատուցման հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ):

ԳԼՈՒԽ 2.
ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ, ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 4. Հատուցման գումարների չափերը և վճարման պայմանները

1. Հատուցման գումարները վճարվում են հատուցման այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել 2017 թվականի հունվարի 1-ից հետո՝ հետևյալ նվազագույն չափերով՝

1) զոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում՝

ա. պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված սպայական կազմի զինծառայողին՝ 82.000.000 դրամ.

բ. պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողին կամ տարածքային պաշտպանությանը ներգրավված կամ կամավորագրված անձին՝ 70.000.000 դրամ.

գ. պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողին՝ 58.000.000 դրամ.

2) առողջությանը պատճառված վնասի հետևանքով՝

ա. պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված սպայական կազմի զինծառայողի I-ին խմբի հաշմանդամության դեպքում՝ 82.000.000 դրամ.

բ. պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի կամ տարածքային պաշտպանությանը ներգրավված կամ կամավորագրված անձի I-ին խմբի հաշմանդամության դեպքում՝ 70.000.000 դրամ.

գ. պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի I-ին խմբի հաշմանդամության դեպքում՝ 58.000.000 դրամ.

դ. պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային

պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված սպայական կազմի զինծառայողի II-րդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 53.000.000 դրամ.

ե. պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի կամ տարածքային պաշտպանությանը ներգրավված կամ կամավորագրված անձի II-րդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 41.000.000 դրամ.

զ. պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի II-րդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 29.000.000 դրամ.

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գումարները վճարվում են հետևյալ պայմաններով՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ կետի ա, բ և գ ենթակետերում նշված գումարից 10.000.000 դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական հավասար վճարներով՝ 20 տարվա ընթացքում.

2) սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դ, ե և զ ենթակետերում նշված գումարից 5.000.000 դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական հավասար վճարներով՝ 20 տարվա ընթացքում:

3. Եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ զինծառայողն ունի երեք կամ ավելի՝ 18 տարին չլրացած երեխաներ կամ 23 տարին չլրացած առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակներ, կամ 18 տարեկան կամ դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակներ, եթե նրանք հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը, ապա սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն վճարվող ամսական հավասար վճարին ավելացվում է ամսական լրացուցիչ 100 հազար դրամ: Սույն մասով սահմանված լրացուցիչ գումարի վճարումը դադարեցվում է սույն մասով սահմանված՝ լրացուցիչ գումար ստանալու իրավունք տվող հիմքը վերանալու, ինչպես նաև՝ հատուցման գումարների վճարման ժամկետը լրանալու կամ հատուցման գումարների վճարման հիմքը վերանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Սույն մասի դրույթները կիրառվում են նաև այն դեպքում, երբ սույն մասով սահմանված՝ լրացուցիչ գումար ստանալու իրավունք տվող հիմքը ծագում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվանից հետո: Սույն մասի կիրառման նպատակով՝

1) Կառավարությունը սահմանում է սույն մասում նշված՝ լրացուցիչ գումար ստանալու իրավունք տվող հիմքերը և դրանց փոփոխման մասին տեղեկությունները բացահայտելու, հավաքագրելու, մշակելու, համապատասխան պետական մարմիններին և Հիմնադրամին տրամադրելու կարգը, ինչպես նաև՝սույն մասի 3-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված փաստերի հաստատման նպատակով ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը և ներկայացման կարգը, ներկայացված փաստաթղթերի հիման վրա որոշում ընդունելու կարգը:

2) Հիմնադրամը սահմանում է սույն մասում նշված՝ լրացուցիչ գումար ստանալու իրավունք տվող հիմքերի վերաբերյալ տեղեկությունների հաշվառման կարգը.

3) Եթե զինծառայողի կապակցությամբ տեղի է ունեցել սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում նշված հատուցման դեպքը, ապա, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով այլ բան ապացուցված չլինելու պարագայում, համարվում է, որ զինծառայողն ունի 18 տարին չլրացած երեք կամ ավելի երեխաներ, նաև այն դեպքում, երբ առկա են սույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված բոլոր հանգամանքները միաժամանակ, կամ՝ սույն կետի «դ» ենթակետում նշված հանգամանքը՝

ա. երրորդ երեխան կենդանի ծնվել է հատուցման դեպքը տեղի ունենալու օրը ներառող ամսվան հաջորդող ինն ամսվա ընթացքում.

բ. բժշկական ախտորոշման տվյալներից հետևվում է, որ ծնված երեխան սաղմնավորվել է մինչև հատուցման դեպքը տեղի ունենալու օրը.

գ. հատուցման դեպքը տեղի ունենալու օրվան նախորդող՝ ոչ պակաս, քան ինն ամսվա ընթացքում անընդմեջ երեխայի մայրը հանդիսացել է զինծառայողի կինը, և հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ երեխայի մոր և զինծառայողի միջև ամուսնությունը դադարեցված չի եղել ամուսնալուծության հիմքով, և հատուցման դեպքը տեղի ունենալու օրվան հաջորդող ինն ամսվա ընթացքում՝ որևէ ժամանակահատվածում երեխայի մայրը կրկին անգամ ամուսնացած չի եղել.

դ. եթե առկա են հատուցման գումար վճարելու՝ սույն օրենքով սահմանված բոլոր այլ հիմքերը, բացակայում են սույն կետի “ա”, “բ” և “գ” ենթակետերում կամ դրանցից մեկում նշված հանգամանքները, սակայն՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է, որ ծնված երեխան հանդիսանում է զինծառայողի երեխան:

4. Սույն հոդվածում նշված հատուցման գումարների չափերը հիմնադրամի խորհրդի որոշմամբ կարող են ինդեքսավորման արդյունքներով ավելացվել՝ կախված հիմնադրամի ֆինանսական գործունեության արդյունքներից:

5. Կախված հիմնադրամի ֆինանսական գործունեության արդյունքներից, հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կարող է կայացնել որոշում՝

1) հատուցման գումարներիվճարումը նաև սույն հոդվածի 2-րդ մասում նշված 20 տարվա ավարտից հետո շարունակելու վերաբերյալ: Սույն մասում նշված դեպքում, վճարման ենթակա հատուցման գումարների չափը եւ վճարման ժամկետները սահմանում է հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը.

2) իր կողմից սահմանված որոշակի եղանակներով (դրամական միջոցների վճարում, բնամթերային ձեւով օգնություն, այլ եղանակ) եւ ժամկետներում հատուցում վճարել նաև հատուցման այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել մինչեւ 2017 թվականի հունվարի 1-ը:

6. Եթե հատուցման վճարը նշանակելուց հետո նույն զինծառայողի կապակցությամբ տեղի է ունենում սույն օրենքով սահմանված հատուցման դեպքի փոփոխություն, ապա շահառուին (շահառուներին) նոր հատուցման դեպքի հիմքով վճարման ենթակա և նախկինում տեղի

ունեցած հատուցման դեպքի հիմքով արդեն իսկ վճարված գումարների միջև տարբերությունը վերահաշվարկվում է՝ Հիմնադրամի խորհրդի կողմից սահմանված կարգով: Եթե սույն մասում նշված վերահաշվարկի արդյունքներով պարզվի, որ՝

1) նախկինում տեղի ունեցած հատուցման դեպքով շահառուին (շահառուներին) վճարված գումարի չափը հավասար է կամ գերազանցում է նոր հատուցման դեպքով վճարման ենթակա գումարի չափին, ապա նոր հատուցման դեպքով վճարման ենթակա հատուցման գումարը համարվում է վճարված և նոր հատուցման դեպքով վճարում չի կատարվում.

2) նոր հատուցման դեպքով վճարման ենթակա գումարի չափը գերազանցում է նախկինում տեղի ունեցած հատուցման դեպքով շահառուին (շահառուներին) արդեն իսկ վճարված գումարի չափին, ապա շահառուին (շահառուներին) վճարվում է նոր հատուցման դեպքով վճարման ենթակա և նախկինում տեղի ունեցած հատուցման դեպքով արդեն իսկ վճարված գումարների միջև տարբերությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն հատուցման դեպքի փոփոխություն է համարվում՝

1) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողի՝ սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում նշված ժամկետում և պատճառով մահանալը.

2) զինծառայողին անհայտ բացակայող համարելուց դադարելը և այդ զինծառայողին առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելը.

3) զինծառայողի հաշմանդամության խմբի փոփոխությունը:

Հոդված 5. Հատուցման գումարների վճարման կարգը

1. Հատուցման դեպք տեղի ունենալու պարագայումՀայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը կամ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունըկամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (սույն օրենքում՝ համապատասխան պետական մարմին)՝ զինծառայողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելն օրենքով սահմանված կարգով որոշվելու (հաստատվելու) օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ Կառավարության կողմից սահմանված կարգով՝

1)սույն օրենքի պահանջների համաձայն որոշում է, թե տվյալ հատուցման դեպքով ով է հանդիսանում շահառու (շահառուներ).

2) Հիմնադրամին է ներկայացնում զինծառայողի, ինչպես նաև շահառուի (շահառուների) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հանրային ծառայության համարանիշի տվյալները կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, ինչպես նաև հատուցման դեպքը և սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանգամանքները հաստատող փաստաթղթերը, հատուցման ենթակա գումարի չափը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկությունների հիման վրա Հիմնադրամը՝

1) սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկությունները ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝

ա. սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերում նշված միանվագ գումարը փոխանցում է շահառու(ներ)ի համար բացված բանկային հաշվին.

բ. սույն կետի “ա”ենթակետում նշված բանկային հաշվին կատարում է սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերում նշված ամսական հավասար վճարումներիցառաջին վճարումը և սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում նշված գումարի առաջին վճարումը, եթե այդ գումարը սույն օրենքի համաձայն ենթակա է վճարման.

2) մինչև յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ, սույն մասի 1-ին կետի “ա” ենթակետում նշված բանկային հաշվին կատարում է սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերում նշված ամսական հավասար վճարումներից՝ տվյալ ամսվա համար հավասարաչափ վճարումը և սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում նշված գումարի՝ տվյալ ամսվա համար վճարումը, եթե այդ գումարը սույն օրենքի համաձայն ենթակա է վճարման:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված վճարման ժամկետները խորհրդի որոշմամբ կարող են հետաձգվել մինչեւ երեք ամիս ժամկետով՝ ելնելով հիմնադրամի ֆինանսական կայունությունն ապահովելու անհրաժեշտությունից:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի “ա”ենթակետում նշված բանկային հաշիվը՝

1) շահառուի (շահառուների) անունովՀիմնադրամի խորհրդի կողմից սահմանված կարգով բացվում է Հիմնադրամը՝ Հիմնադրամի խորհրդի կողմից սահմանված մրցութային կարգով ընտրված բանկերից մեկում: Սույն կետի համաձայն բացված բանկային հաշվին սույն օրենքի համաձայն փոխանցվող դրամական միջոցների տնօրինման իրավունքը պատկանում է այն շահառուին (շահառուներին), ում անունով այդ բանկային հաշիվը բացվել է.

2) Հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 50.1-րդ գլխով նախատեսված հատուկ բանկային հաշիվ:

Հոդված 6. Զինծառայողներին անհայտ բացակայող ճանաչելու դեպքում հատուցման գումարների վճարման առանձնահատկությունները

1. Զինծառայողին անհայտ բացակայող ճանաչելու դեպքում, հատուցման գումարները վճարվում են սյուն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով և սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված չափերով .

2. Եթե զինծառայողը դադարել է համարվել անհայտ բացակայող, ապա մինչև զինծառայողին անհայտ բացակայող համարելու դադարումը սույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն միանվագ և ամսական հավասար վճարների ձևով, ինչպես նաև՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարված գումարները ենթակա չեն վերադարձման, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասում նշված դեպքերի:

3. Եթե զինծառայողը դադարել է համարվել անհայտ բացակայող՝

1) դատարանի կողմից այդ զինծառայողին մահացած ճանաչելու հիմքով, ապա

ա. զինծառայողին մահացած ճանաչելու հիմքով սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված միանվագ ձևով գումարներ չեն վճարվում.

բ. ամսական հավասար վճարների ձևով վճարման ենթակա գումարների վճարումը շարունակվում է:

2) այդ զինծառայողին հայտնաբերելու հետևանքով և այդ զինծառայողը ճանաչվել է առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, ապա առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունենալու հիմքով սույն օրենքի համաձայնզինծառայողին վճարման ենթակա գումարը վերահաշվարկվում է՝սույն օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան.

3) այդ զինծառայողին հայտնաբերելու հետևանքով և բացակայում են սույն մասի 2-րդ կետում նշված հանգամանքները, ապա հատուցման գումարների, ինչպես նաև՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում նշված գումարի վճարումը դադարեցվում է զինծառայողին անհայտ բացակայող համարելուց դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները չեն կիրառվում, եթե առկա է սույն հոդվածի 5-րդ մասում նշված դեպքերից մեկը:

5. Զինծառայողին անհայտ բացակայող ճանաչելու հիմքով շահառուներին միանվագ եւ (կամ) հավասարաչափ վճարների ձեւով վճարված հատուցման գումարներն ենթակա են շահառուների կողմից վերադարձման, եթե պարզվի որ՝

1) զինծառայողն անհայտ կորել է՝

ա. զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելու, կամ

բ. դասալքության, կամ

գ. կամովին գերի հանձնվելու, կամ

դ. մարտադաշտն ինքնակամ լքելու հետեւանքով, եւ

2) սույն մասի 1-ին կետում նշված հանգամանքները հաստատվել են դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

6. Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտով հատուցման գումարները վերադարձնելու պարտականությունը կարող է համապարտության կարգով դրվել նաեւ սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում նշված հանգամանքներում անհայտ կորած եւ կենդանի համարվող զինծառայողի վրա:

7. Հատուցման գումարները վերադարձվում են դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հոդված 7. Հատուցման գումար ստանալու իրավունք ունեցող անձանց որոշումը

1. Զինծառայողի հաշմանդամության դեպքում հատուցման գումարը վճարվում է այդ զինծառայողին կամ իր կողմից սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված համապատասխան պետական մարմին ներկայացված դիմումում նշված անձին, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքի: Սույն մասում նշված դիմումի ձևը և ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Զինծառայողի զոհվելու (մահանալու) կամ զինծառայողին անհայտ բացակայող ճանաչելու դեպքում կամ այն դեպքում, երբ մարտական գործողություններում ստացված վնասվածքների հետևանքով առաջացած մտավոր կամ հոգեկան անկարողության հետևանքով զինծառայողը չի կարող ներկայացնել սույն հոդվածի 1-ին մասում նշված դիմումը՝

1) հատուցման գումարը վճարվում է շահառուներին՝ վերջիններիս համաձայնությամբ որոշված շահառուի միջոցով.

2) շահառուների միջեւ համաձայնության բացակայության դեպքում, վճարման ենթակա հատուցման գումարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով բաժանվում է շահառուների միջեւ եւ վճարվում է իրենցից յուրաքանչյուրին առանձին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշված դեպքում հատուցման գումարը բաժանվում է Կառավարության կողմից սահմանված կարգով՝ հետևյալ սկզբունքներով՝

1) հատուցման ընդհանուր գումարը բաժանվում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերով սահմանված շահառուների թվի վրա.

2) եթե շահառուներից մեկը մահանում է, ապա այդ անձին վճարման ենթակա հատուցման գումարը չի ներառվում ժառանգական զանգվածի մեջ եւ հավասարաչափ բաժանվում է մնացած շահառուների միջև:

4. Եթե բացակայում են սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերով սահմանված շահառուները, ապա սույն օրենքով սահմանված հատուցման գումարները չեն վճարվում:

5. Եթե մահանում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերով սահմանված միակ շահառուն, ապա այդ շահառուին վճարման ենթակա հատուցման գումարը չի ներառվում ժառանգական զանգվածի մեջ եւ այդ գումարի վճարման պարտավորությունը դադարում է:

6. Եթե մահանում սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետում նշված հիմքով շահառու ճանաչված զինծառայողը և առկա չեն սույն օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետում նշված հանգամանքները, ապա մահացած զինծառայողի՝ հատուցման գումար ստանալու իրավունքը չի ներառվում ժառանգական զանգվածի մեջ և դադարում է:

7. Սույն հոդվածի դրույթների կիրառումն ապահովելու նպատակով, Կառավարությունը սահմանում է շահառուների շրջանակը որոշելու կարգը, շահառուների միջև համաձայնության առկայությունը, բացակայությունը կամ փոփոխությունը հիմնավորվելու կարգը, շահառուների շրջանակում կատարված փոփոխությունների մասին տեղեկությունները համապատասխան պետական մարմիններին և Հիմնադրամին տրամադրելու կարգը:

Հոդված 8. Հարկային արտոնությունները

1. Շահառուներին վճարված հատուցման գումարներն ենթակա չեն եկամտային կամ որեւէ այլ հարկով հարկման կամ պետական կամ համայնքային բյուջե վճարվող որեւէ այլ վճարով նվազեցման:

ԳԼՈՒԽ 3.
ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԸ

Հոդված 9. Սույն գլխում օգտագործվող հասկացությունների նշանակությունը

1. Սույն գլխի դրույթների կիրառման նպատակով՝

1) Դրոշմանիշ է համարվում Հիմնադրամի կողմից էլեկտրոնային եղանակով թողարկված պիտակը.

2) ֆիզիկական անձի ռեզիդենտությունը, ոչ ռեզիդենտությունը, ինչպես նաեւ՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտը որոշվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն.

3) Սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ եւ 6-րդ կետերում նշված ֆիզիկական անձանց համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային ամիսը, իսկ անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին.

4) Հարկային գործակալ է համարվում սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ եւ 6-րդ կետերում նշված ֆիզիկական անձանց նույն կետերում նշված հիմքերով եկամուտ վճարող՝ իրավաբանական անձը (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկը, օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը), անհատ ձեռնարկատերը, նոտարը, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը, հիմնարկը.

Հոդված 10. Դրոշմանիշային վճարի հասկացությունը

1. Դրոշմանիշային վճարը (սույն օրենքում՝ Դրոշմանիշային վճար) զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով՝ սույն օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

Հոդված 11. Դրոշմանիշային վճար վճարողները

1. Դրոշմանիշային վճար պարտավոր են վճարել (դրոշմանիշային վճար վճարողներ են համարվում)՝

1) աշխատանքային պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց.

2) աշխատանքային պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց.

3) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև հարկային գործակալի պարտավորությունից ազատված անձանցից եկամուտները ստացողները.

4) Նոտարները.

5) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց.

6) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց:

2. Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճար չեն վճարում՝
1)սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ կամ 6-րդ կետերում նշված այն անձինք, որոնք չունեն տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համարստացման ենթակա՝ հաշվեգրված եկամուտ,
2) սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված այն անձինք,որոնքտվյալ հաշվետու տարվա ընթացքում ձեռնարկատիրական կամ նոտարական գործունեությունից կամ այլ հիմքով եկամուտներչեն ստացել:

3. Դրոշմանիշային վճար չեն վճարում սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 2-րդ կետում նշված այն անձինք, որոնք աշխատում են միայն մեկ աշխատանքային պայմանագրով և այդ աշխատանքային պայմանագրով՝ հարկերը և պարտադիր այլ վճարները (ներառյալ դրոշմանիշային վճարը) նվազեցնելուց հետո ստացվող աշխատավարձը չի գերազանցում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը: Սույն մասում նշված անձանց փոխարեն դրոշմանիշային վճարները վճարվում են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում աշխատող անձանց փոխարեն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից.
2) Տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող անձանց փոխարեն՝ համապատասխան համայնքի բյուջեից.
3) այլ գործատուների մոտ աշխատող անձանց փոխարեն՝ տվյալ անձանց աշխատավարձ վճարող գործատուի կողմից՝ իր միջոցների հաշվին:

4. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի՝ հիմնադրամի միջոցով կամ ինքնուրույն, իր կողմից նախընտրած չափով, վճարել դրոշմանիշային վճար՝ դրա համար անհրաժեշտ քանակությամբ էլեկտրոնային եղանակով դրոշմանիշեր ձեռք բերելու միջոցով (կամավոր նվիրաբերություն): Հիմնադրամն իրավունք ունի կազմակերպել հանգանակություններ՝ կամավոր նվիրաբերությունները քաջալերելու նպատակով:

5. Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող կամ զոհված (մահացած) զինծառայողի ծնողը, ամուսինը և(կամ) զավակը (զավակները) իրավունք ունեն յուրաքանչյուր տարվա առաջին երկու ամսվա ընթացքում դիմում ներկայացնել Հիմնադրամին՝ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքումիրենց կողմից վճարված (իրենց եկամուտներից հարկային գործակալի կողմից պահված) դրոշմանիշային վճարի գումարներն ամբողջությամբ կամ մասնակի հետ վերադարձնելու պահանջով: Սույն մասում նշված ժամկետից հետո դիմում ներկայացվելու դեպքում, Հիմնադրամի կողմից դիմումը մերժվում է՝ այդ մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնելով դիմումատուին:Դիմումին կից ներկայացվում է համապատասխան պետական մարմնի կողմից տրված զինծառայողի՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու կամ զոհված (մահացած) լինելու մասին տեղեկանքը, ինչպես նաև՝ դիմումը ներկայացնելու օրվան նախորդ մեկ տարվա ընթացքում վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին տեղեկանքը: Սույն մասի համաձայն հիմնադրամին ներկայացվող դիմումի, համապատասխան պետական մարմնի և հարկային մարմնի կողմից տրամադրվող տեղեկանքների ձևերը, ինչպես նաև՝ տեղեկանքների տրամադրմանև դրոշմանիշային վճարի վերադարձման կարգը սահմանում է Կառավարությունը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասում նշված դիմումը և կից տեղեկանքները Հիմնադրամում մուտք լինելու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը դիմումում նշված բանկային հաշվին է փոխանցում դիմումին կից ներկայացված՝ վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին տեղեկանքում նշված գումարը:

7. Սույն մասում նշված՝ համապատասխան պետական մարմինների կողմից տրամադրման ենթակա տեղեկանքը դիմելու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է՝

1) զինծառայողի՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու վերաբերյալ տեղեկանքը՝ զինծառայողի զորակոչն իրականացրած զինվորական

կոմիսարիատը.

2) զինծառայողի՝ զոհված (մահացած) լինելու վերաբերյալ տեղեկանքը՝ այն համապատասխան պետական մարմինը, որն իրականացնում է զոհված (մահացած) զինծառայողի հաշվառումը:

8. Սույն մասում նշված՝ վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին տեղեկանքը դիմելու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է՝

1) համապատասխան պետական մարմիններում աշխատանքային պայմանագրով աշխատող կամ համապատասխան պետական մարմիններից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրով եկամուտ ստացող անձնանց մասով՝ այն համապատասխան պետական մարմինը, որտեղ աշխատանքային պայմանագրով աշխատում է կամ ումից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրով եկամուտ է ստանում տվյալ անձը.

2) սույն մասի 1-ին կետում չնշված անձանց մասով՝ հարկային մարմինը:

Հոդված 12. Դրոշմանիշային վճարների չափը

1. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ եւ 6-րդ կետերում նշված ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը վճարում են 1000 դրամ գումարի չափով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ 12 000 դրամ գումարի չափով:

2. Եթե նույն ֆիզիկական անձը միաժամանակ աշխատում է աշխատանքային պայմանագրով և հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, նոտար և(կամ) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրով ստանում է եկամուտ, ապա այդ ֆիզիկական անձը իրավունք ունիսույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում դիմել Հիմնադրամին՝ սույն մասում նշված՝ մեկից ավելի հիմքովվճարված դրոշմանիշային վճարը հետ ստանալու համար:

3. Եթե նույն ֆիզիկական անձը նույն հաշվետու ժամանակաշրջանում եկամուտներ է ստանում տարբեր անձանց հետ կնքված՝ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական մեկից ավելի պայմանագրով, ապա այդֆիզիկական անձն իրավունք ունիսույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում դիմել Հիմնադրամին՝ սույն մասում նշված՝ մեկից ավելի հիմքով վճարված դրոշմանիշային վճարը հետ ստանալու համար:

4. Եթե նույն ֆիզիկական անձն աշխատանքային պայմանագրով աշխատում է մեկից ավելի գործատուի մոտ, ապա այդ ֆիզիկական անձնիրավունք ունիսույն օրենքի 11-րդ հոդվածի 5-

րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում դիմել Հիմնադրամին՝ սույն մասում նշված՝ մեկից ավելի հիմքով վճարված դրոշմանիշային վճարը հետ ստանալու համար:

5. Սույն հոդվածի 2-4-րդ մասերում սահմանված դեպքերում Հիմնադրամը դրոշմանիշային վճարը վերադարձնում է սույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետներում:

Հոդված 13. Դրոշմանիշային վճարների վճարումը

1. Եթե սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված անձինք եկամուտներ են ստանում հարկային գործակալից, ապա այդ անձինք դրոշմանիշային վճարը վճարում են բացառապես հարկային գործակալի միջոցով:
2. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված անձինք, ինչպես նաև՝ սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված՝ հարկային գործակալ չհամարվող անձից եկամուտներ ստացող անձինք դրոշմանիշային վճարը վճարում են ինքնուրույն:
3. Սույն օրենքի 11-րդ հոդվածում նշված անձանց կողմից տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում նշված չափով դրոշմանիշային վճար կատարելու պարտականությունը համարվում է կատարված, իսկ համապատասխան չափով դրոշմանիշեր՝ ձեռք բերված, այդ անձանց կողմից հարկային գործակալի միջոցով կամ ինքնուրույն սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում նշված գումարը պետական բյուջե փոխանցելու օրվանից:
4. Դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը սույն օրենքի համաձայն պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով՝ ապա՝հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Մինչև գումարի գանձման վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը պարտավոր անձի գույքի վրա հարկային մարմնի կողմից կարող է դրվել արգելանք կամ կիրառվել սահմանափակում՝Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

Հոդված 14. Հարկային գործակալի միջոցով դրոշմանիշային վճար վճարելը

1. Հարկային գործակալները յուրաքանչյուր ամիս սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված չափերով հաշվարկում են տվյալ ամսվա համար դրոշմանիշային վճարների չափը՝ հիմք ընդունելով տվյալ ամսվա համար հարկային մարմիններին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարիամսական ամփոփ հաշվարկում ներառված այն վարձու աշխատողների թիվը, որոնց համար տվյալ ամսում հաշվեգրված են եկամուտներ:

2. Յուրաքանչյուր ամսվա համար սույն հոդվածի 1-ին մասի համաձայն հաշվարկված դրոշմանիշային վճարի գումարը հարկային գործակալները պետական բյուջե են փոխանցում մինչև դրոշմանիշային վճարների չափի հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

3. Յուրաքանչյուր անձի մասով տվյալ ամսվա համար հաշվարկված դրոշմանիշային վճարի գումարը հարկային գործակալը պահում է այդ հարկային գործակալից տվյալ անձի կողմից տվյալ ամսում ստացման ենթակա՝ հաշվեգրված եկամուտներից:

4. Հարկային գործակալների կողմից հարկային մարմիններին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ճշտված ամսական ամփոփ հաշվարկում ներառված վարձու աշխատողների թվի նվազեցումը դրոշմանիշային վճարիհաշվարկման համար հաշվի չի առնվում:

Հոդված 15. Դրոշմանիշային վճարը ինքնուրույն վճարելը

1. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված անձինք, ինչպես նաև՝ սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված՝ հարկային գործակալ չհամարվող անձից եկամուտներ ստացող անձինք, տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարը վճարում են ինքնուրույն՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:
2. Դրոշմանիշային վճարներն ինքնուրույն կատարող՝ սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված անձինք դրոշմանիշային վճարը կատարում են եկամտային հարկի վճարման ժամկետներում՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված եկամտային հարկի հաշվարկում եկամուտներ արտացոլված լինելու հանգամանքը:

Հոդված 16. Դրոշմանիշային վճար կատարած անձանց ցուցակները և փոխանցման հանձնարարական ներկայացնելը, պետական բյուջեից հիմնադրամին դրամական միջոցների հատկացումը

1. Հարկային մարմինը՝

1) Յուրաքանչյուր հարկային գործակալի կողմից եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկի ներկայացման և դրա հիման վրա դրոշմանիշային վճարի ամբողջ գումարի վճարման օրվան հաջորդող հինգաշխատանքային օրվա ընթացքում հիմնադրամին փոխանցում է տվյալ հարկային գործակալի այն աշխատողների ցուցակը, որոնց համար տվյալ հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են դրոշմանիշային վճարներ.
2) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարներ ինքնուրույն վճարողների համար սույն օրենքով սահմանված դրոշմանիշային վճար վճարելու վերջնաժամկետից հետո հինգաշխատանքային օրվա ընթացքում հիմնադրամին փոխանցում

է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճար ինքնուրույն վճարողների ցուցակը, ովքեր տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ կատարել են դրոշմանիշային վճարներ.
3) դրոշմանիշային վճարներ կատարող անձանց կողմից (սույն օրենքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի միջոցով) տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարի ամբողջ գումարը վճարելու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում ֆինանսների ոլորտում կառավարության լիազորված մարմնին է ներկայացնում տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար փոխանցման հանձնարարական (այսուհետ՝ Փոխանցման հանձնարարական)՝ սույն կետում նշված անձանց կողմից վճարված դրոշմանիշային վճարի գումարներից Հիմնադրամին գումար փոխանցելու վերաբերյալ՝ նշելով փոխանցման ենթակա գումարը: Ընդ որում, տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմնի կողմից ներկայացվող փոխանցման հանձնարարականում հարկային մարմինը նշում է վճարված դրոշմանիշային վճարի այն գումարը, որը հավասար է դրոշմանիշային վճարներ կատարող անձանց՝ դրոշմանիշային վճարների կատարման գծով տվյալ հաշվետու ժամանակաշրջանիհամար պարտավորության չափին:

2. Ֆինանսների ոլորտում կառավարության լիազորված մարմինը Փոխանցման հանձնարարականը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում հիմնադրամի՝ սույն օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասում նշված հատուկ հաշվին փոխանցում է Փոխանցման հանձնարարականում նշված գումարը:

3. Եթե տվյալ հարկային գործակալի կամ դրոշմանիշային վճարի վճարումն ինքնուրույն կատարող անձի կողմից տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար փաստացի վճարված դրոշմանիշային վճարների գումարի չափը գերազանցում է Փոխանցման հանձնարարականում նշված գումարի չափը, ապա՝ ֆինանսների ոլորտում կառավարության լիազորված մարմինը տվյալ հարկային գործակալի (դրոշմանիշային վճարի վճարումն ինքնուրույն կատարող անձի)կողմից փաստացի վճարված դրոշմանիշային վճարի՝ Փոխանցման հանձնարարականում նշված գումարի չափը գերազանցող գումարի կարգավիճակը որոշվում է Կառավարության սահմանած կարգով:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ցաուցակների և փոխանցման հանձնարարականի ձևը, Հարկային մարմնի կողմից այդ փաստաթղթերը՝ համապատասխանաբար՝ Հիմնադրամին և Ֆինանսների ոլորտում կառավարության լիազորված մարմնին փոխանցելու և տրամադրելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 17. Դրոշմանիշերի թողարկումը

1. Դրոշմանիշերը թողարկվում են հիմնադրամի կողմից՝ էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային համակարգի միջոցով:

2. Թողարկվող դրոշմանիշերը կարող են ունենալ տարբեր անվանական արժեք:
3. Դրոշմանիշերի թողարկման, հաշվառման, ձեռք բերման կարգը, թողարկման ենթակա դրոշմանիշերի անվանական արժեքը ինչպես նաև՝ դրոշմանիշերի թողարկման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի գործունեության կարգը սահմանում է հիմնադրամի խորհուրդը:

ԳԼՈՒԽ 4. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

Հոդված 18. Հիմնադրամի իրավական կարգավիճակը

1. Հիմնադրամը՝ սույն օրենքով և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստեղծված՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող՝ պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ է, որի հիմնադիրը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է (այսուհետ՝ Կենտրոնական բանկ):

2. Հիմնադրամը կարող է իրականացնել միայն սույն օրենքով նախատեսված գործառույթներ:
3. Հիմնադրամը կարող է լուծարվել, վերակազմակերպվել կամ սնանկ ճանաչվել միայնՀիմնադրամի լուծարման, վերակազմակերպման կամ սնանկ ճանաչելու մասին օրենքընդունելու դեպքում:
4. Հիմնադրամն ազատվում է շահութահարկի, ավելացված արժեքի հարկի և Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ հարկերի, պետական և տեղական տուրքերի, ինչպես նաև պետական կամ համայնքային բյուջե որևէ վճար կատարելու պարտականությունից:

Հոդված 19. Հիմնադրամի գործառույթներն ու իրավասությունները

1. Հիմնադրամն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) օրենսդրությամբ չարգելված եղանակներով տիրապետում, օգտագործում և տնօրինում է հիմնադրամի ակտիվները՝ սույն օրենքով սահմանված նպատակների իրագործման համար .
2) հատուցման դեպք տեղի ունենալու պարագայում՝ ապահովում է հատուցման գումարների վճարումը շահառուներին.
3) իրականացնում է սույն օրենքով սահմանված այլ գործառույթներ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործառույթներն իրականացնելու նպատակով հիմնադրամն իրավասու է՝
1) կնքել իր գործառույթների իրականացմանն ուղղված գործարքներ.
2) ստանալ վարկեր, փոխառություններ, երաշխիքներ.
3) իր միջոցները ներդնել սույն օրենքում նշված ակտիվներում.
4) Հայաստանի Հանրապետությունում կամ արտերկրում թողարկել պարտատոմսեր և այլ արժեթղթեր՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.
5) կատարել իր գործառույթների հետ կապված և դրանց իրականացմանն ուղղված՝ փաստացի և իրավական այլ գործողություններ:

Հոդված 20. Հիմնադրամի միջոցները

1. Հիմնադրամի միջոցները ձեւավորվում են հիմնադրամի սկզբնական միջոցներից եւ հիմնադրամի՝ սույն օրենքով չարգելված աղբյուրներից ստացված այլ միջոցներից:

2. Հիմնադրամի սկզբնական միջոցները ձեւավորվում են հիմնադրման պահին հիմնադրի կողմից հիմնադրամին հատկացված գույքից, որի չափը կազմում է 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հիմնադրամի կողմից սույն հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի համաձայն թողարկված արժեթղթերի անվանական արժեքը եւ տոկոսներըմարվում են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված կարգով:

4. Հիմնադրամի միջոցները կարող են ձեւավորվել նաեւ հետեւյալ աղբյուրներից.

1)սույն օրենքով սահմանված կարգով հավաքագրված դրոշմանիշային վճարների գումարներից.

2) ներգրաված վարկերից, փոխառություններից.

3) նվիրատվությունների, նվիրաբերությունների, դրամաշնորհների գումարներից.

4) միջոցների ներդրումներից ստացվող եկամուտներից.

5) հիմնադրամի կողմից թողարկված պարտքային արժեթղթերի տեղաբաշխումից ստացված գումարներից

6) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

5. Հիմնադրամի միջոցները կարող են օգտագործվել միայն՝

1) հատուցում վճարելու նպատակով.

2) սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան որոշված թույլատրելի սահմաններում հիմնադրամի ծախսերը կատարելու նպատակով.

3) սույն օրենքի համաձայն հիմնադրամի կողմից թողարկված արժեթղթերով,ներգրավված վարկերով և փոխառություններով ստանձնված պարտավորությունների կատարման նպատակով:

6. Հիմնադրամի միջոցների վրա չի կարող տարածվել բռնագանձում, կիրառվել արգելանք կամ որեւէ այլ սահմանափակում որեւէ պահանջով, բացառությամբ կյանքին կամ առողջության հասցված վնասներից, ինչպես նաեւ աշխատավարձի ու դրան հավասարեցված միջոցներից բխող պահանջների, վարկային, փոխառության պայմանագրերով, հիմնադրամի կողմից թողարկված արժեթղթերով պարտատերերի, ինչպես նաեւ՝ շահառուների պահանջների:

7. Հիմնադրամին հասցեագրված դրամական միջոցների սկզբնական հաշվառումը կատարվում է Կենտրոնական բանկում բացված հատուկ հաշվում (հաշիվներում): Կենտրոնական բանկում բացված հատուկ հաշվում (հաշիվներում) հաշվառվելուց հետո, դրամական միջոցները տնօրինվում են սույն օրենքով սահմանված ուղղություններով:

Հոդված 21. Հիմնադրամի ծախսերը

1. Հիմնադրամի ծախսերն են՝

1) գործառնական ծախսերը՝

ա. հատուցման գումարների վճարման հետ կապված ծախսեր.

բ. ստացված վարկերի, փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսները.

գ. հիմնադրամի ակտիվների կառավարման հետ կապված ծախսերը.

դ. հիմնադրամի կողմից բանկային ծառայությունների ստացման հետ կապված վճարները.

ե. հիմնադրամի աուդիտի եւ խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարներն, ինչպես նաև օրենքով սահմանված հաշվետվություններն ու տեղեկություններն հրապարակելու հետ կապված ծախսերը,

2) վարչական ծախսերը՝

ա. հիմնադրամի աշխատակիցներին վճարվող աշխատավարձը եւ դրան հավասարեցված վճարները.

բ. հիմնադրամի պատշաճ գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ ծախսերը:

2. Հիմնադրամի ծախսերի տարեկան թույլատրելի սահմանաչափը սահմանում է հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը: Ընդ որում՝ հիմնադրամի տարեկան վարչական ծախսերը չեն կարող գերազանցել հիմնադրամի՝ նախորդ տարվա ընդհանուր ակտիվների գումարի 0.5 տոկոսը:

Հոդված 22. Հիմնադրամի միջոցների կառավարումը

1. Հիմնադրամի միջոցները կառավարում է Հիմնադրամը: Հիմնադրամը կարող է իր միջոցների կառավարումը հանձնել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի սահմանած կարգին եւ չափանիշներին համապատասխան ընտրված ակտիվների՝ արտաքին, անկախ, մասնագիտացված կառավարչին կամ ինքնուրույն կառավարել դրանք:

2. Հիմնադրամի միջոցները կարող են ներդրվել բացառապես հետեւյալ ֆինանսական ակտիվներում՝

1) Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերում, Կենտրոնական բանկի արժեթղթերում.

2) Կենտրոնական բանկում և(կամ) բարձր վարկանիշ ունեցող բանկերում՝ որպես բանկային ավանդ եւ (կամ) բանկային հաշիվ.

3) բարձր վարկանիշ ունեցող երկրների կառավարությունների եւ (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում.

4) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ հաստատված՝ հիմնադրամի ներդրումային պայուսակի կառուցվածքին համապատասխանող այլ ակտիվներում:

3. Հիմնադրամի միջոցների կառավարման ընդհանուր ծախսերը չեն կարող գերազանցել կառավարվող միջոցների արժեքի 2 տոկոսը: Հիմնադրամի միջոցների կառավարման ծախսերն են սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում նշված գործադիր հանձնաժողովի անդամների վճարվող վարձատրությունը, իսկ միջոցների կառավարումը արտաքին մասնագիտացված կառավարչին հանձնելու դեպքում՝ կառավարչին վճարվող վճարը:

Հոդված 23. Հիմնադրամի կառավարման մարմինները

1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

1) Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը.

2) Հիմնադրամի տնօրենը.

3) Հիմնադրամի գործադիր հանձնաժողովը՝ սույն հոդվածով սահմանված դեպքերում:

2. Այն դեպքում, երբ հիմնադրամն ինքնուրույն է կառավարում իր միջոցները, ապա հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ պետք է ստեղծվի երեքից յոթ անդամ ունեցող գործադիր հանձնաժողով, որի գործառույթը հիմնադրամի ակտիվների պրոֆեսիոնալ կառավարումն է: Գործադիր հանձնաժողովի կազմում ընդգրկվող անձինք պետք է ունենան ակտիվների կառավարման բնագավառում մասնագիտական փորձ: Հիմնադրամի տնօրենն ի պաշտոնե հանդիսանում է գործադիր հանձնաժողովի անդամ:

3. Գործադիր հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ լուծարման կարգերը սահմանվում են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

4. Հիմնադրամը կարող է ունենալ նաեւ իր կանոնադրությամբ նախատեսված այլ մարմիններ:

Հոդված 24. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)՝ հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինն է:

2. Խորհուրդը կազմված է ինն անդամից: Հոգաբարձուների խորհրդի անդամները նշանակվում (ընտրվում) են հինգ տարի ժամկետով: Հոգաբարձուների խորհրդի անդամներից՝

1) երեքին՝ նշանակումէ Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

2) երեքին՝ նշանակումէ Կենտրոնական բանկի խորհուրդը.

3) երեքին՝ ընտրում են զինծառայողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները:

3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և(կամ) 3-րդ կետում նշված անդամների կազմում թափուր տեղ առաջանալու դեպքում, հիմնադրամի տնօրենն այդ մասին ծանուցում է համապատասխան անդամին նշանակելու իրավասություն ունեցող մարմնին և(կամ) կազմակերպությանը (կազմակերպություններին): Առաջացած թափուր տեղում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ կենտրոնական բանկն իրենց անդամին նշանակում են հիմնադրամի տնօրենի ծանուցումը ստանալու օրվան հաջորդող տաս օրվա ընթացքում.
2) զինծառայողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններն իրենց անդամին նշանակում են հիմնադրամի տնօրենի ծանուցումը ստանալու օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում: Եթե սույն կետում նշված ժամկետում զինծառայողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները չեն նշանակում խորհրդի իրենց անդամին, ապա չնշանակված անդամին՝ սույն մասում նշված մեկամսյա ժամկետը լրանալու օրվանից 10 օրվա ընթացքում նշանակում են խորհրդի մնացած անդամները:

4. Հոգաբարձուների խորհրդի անդամները պետք է ունենան կառավարման եւ ֆինանսների բնագավառներում գիտելիքներ եւ առնվազն հինգ տարվա փորձ: Նրանք պետք է լինեն հասարակության շրջանում հարգանք վայելող եւ անբասիր համբավ ունեցող անձինք:

5. Խորհուրդն ունի նախագահ, որին իրենց կազմից ընտրում են հոգաբարձուների խորհրդի անդամները՝ հինգ տարի ժամկետով:

6. Խորհրդի անդամները Խորհրդի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

7. Խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում՝

1) հիմնադրամի բյուջեի հաստատումը, ինչպես նաեւ՝ հիմնադրամի ծախսերի տարեկան թույլատրելի սահմանաչափի սահմանումը.

2) հիմնադրամի գործադիր հանձնաժողովի անդամների նշանակումը, հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ լուծարման կարգերը հաստատումը, իսկ հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված դեպքերում՝ հիմնադրամի այլ մարմինների ձեւավորումը եւ դրանց լիազորությունների սահմանումը.

3) հիմնադրամի տնօրենի նշանակումը.

4) հիմնադրամի աուդիտն իրականացնող կազմակերպության ընտրությունը.

5) հիմնադրամի կողմից եռամսյակային հաշվետվությունների հրապարակման կարգը, ձեւը եւ հաշվետվությունների հաստատումը:

6) ընդունում է այն կարգերը և որոշումները, որոնց ընդունումը սույն օրենքով կամ հիմնադրամի կանոնադրությամբ վերապահված է խորհրդի իրավասությանը.

7) շահառուներին հատուցման գումարներ վճարելու կարգի սահմանումը.

8) հիմնադրամի գործունեության նկատմամբ կորպորատիվ վերահսկողություն իրականացնելը.

9) սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում նշված որոշումների ընդունումը.

10) սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասում նշված՝ բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների, կենտրոնական բանկերի եւ (կամ)բանկերի վարկանիշի նվազագույնշեմիսահմանումը.

8. Խորհրդի այլ իրավասությունները սահմանվում են հիմնադրամի կանոնադրությամբ:

Հոդված 25. Հիմնադրամի տնօրենը

1. Հիմնադրամի տնօրենը՝ հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարում իրականացնող բարձրագույն պաշտոնատար անձն է:

2. Հիմնադրամի տնօրենին նշանակում է խորհուրդը:

3. Տնօրենի իրավասությունները սահմանվում են սույն օրենքով եւ հիմնադրամի կանոնադրությամբ:

4. Հիմնադրամի տնօրենը՝

1) ապահովում է հիմնադրամի բնականոն գործունեությունը.

2) առանց լիազորագրի հանդես է գալիս հիմնադրամի անունից.

3) տալիս է լիազորագրեր.

4) հիմնադրամի անունից կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

5) աշխատանքի է ընդունում եւ աշխատանքից ազատում հիմնադրամի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման եւ կարգապահական պատասխանատվության միջոցներ.

6) խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի գործառնական եւ վարչական ծախսերի սահմանաչափը.

7) իրականացնում է հիմնադրամի կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Հոդված 26. Հիմնադրամի աուդիտը, հաշվետվողականությունը եւ գործունեության վերահսկողությունը

1. Հիմնադրամի գործունեությունը յուրաքանչյուր տարի ստուգվում է արտաքին, անկախ, միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպության կողմից: Աուդիտը,

ինչպես նաև՝ հիմնադրամում հաշվապահական հաշվառումն իրականացվում է միջազգային ստանդարտներին համապատասխան:
2. Հիմնադրամը՝ իր գործունեության վերաբերյալ հրապարակում է եռամսյակային հաշվետվություններ՝ խորհրդի կողմից սահմանված կարգով, ձևով և բովանդակությամբ:
3. Յուրաքանչյուր տարվա համար Ազգային ժողովին ներկայացվող զեկույցի շրջանակներում, կառավարությունը ներկայացնում է հիմնադրամի գործունեության մասին տեղեկություններ:
4. Հիմնադրամի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կենտրոնական բանկը: Վերահսկողություն իրականացնելու նպատակով, կենտրոնական բանկն օժտված է "Հիմնադրամների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով լիազորված իրավասու մարմնին և "Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումն երաշխավորելու մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով՝ Կենտրոնական բանկին վերապահված լիազորություններով:

ԳԼՈՒԽ 5.
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Հոդված 27. Հիմնադրամի ստեղծումը

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից երկու շաբաթվա ընթացքում կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է հիմնադրամ ստեղծելու մասին որոշում, հաստատում է հիմնադրամի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ապահովում է հիմնադրամի պետական գրանցումը.

2. Հիմնադրամի պետական գրանցման օրվանից մեկ ամսվա ընթացքում սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պետական մարմինները և հասարակական կազմակերպությունները նշանակում են խորհրդի իրենց անդամներին:

3. Եթե հիմնադրամի պետական գրանցման օրվանից մեկ ամսվա ընթացքում սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նշված հասարակական կազմակերպությունները չեն նշանակում խորհրդի կազմում իրենց անդամներին կամ դրանցից մեկին՝ ապա չնշանակված անդամներին (անդամին)՝ սույն մասում նշված՝ մեկամսյա ժամկետը լրանալու օրվանից 10 օրվա ընթացքում նշանակում են խորհրդի՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված անդամները:

4. Հիմնադրամի խորհրդի բոլոր անդամներին նշանակելու օրվանից երկու շաբաթվա ընթացքում՝

1) ընտրվում է խորհրդի նախագահը.
2) ընդունվում են այն բոլոր իրավական ակտերը, որոնք սույն օրենքի համաձայն ենթակա են ընդունման խորհրդի կողմից.
3) կատարվում են հիմնադրամի այն բոլոր պաշտոնատար անձանց նշանակումները և ձևավորվում են հիմնադրամի այն բոլոր մարմինները, որոնց նշանակումը կամ ձևավորումը սույն օրենքի համաձայն վերապահված է խորհրդի իրավասությանը:

5. Հիմնադրամի պետական գրանցման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում կենտրոնական բանկը հիմնադրամի անունով բացում է Հիմնադրամի սույն օրենքով

սահմանված բանկային հաշիվները և Հիմնադրամին փոխանցում է սույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված գումարը:

Հոդված 28. Էլեկտրոնային ձեւով դրոշմանիշերի թողարկումը եւ էլեկտրոնային համակարգի ներդրումը

1. Էլեկտրոնային համակարգը պետք է ներդրվի և էլեկտրոնային ձևով դրոշմանիշերի թողարկումը սկսվի սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում:

2. Մինչև էլեկտրոնային համակարգի ներդրումը և էլեկտրոնային ձևով դրոշմանիշների թողարկման սկիզբը, կամավոր նվիրաբերությունների ներգրավման նպատակով դրոշմանիշերի թողարկման, հաշվառման, ձեռք բերման կարգը սահմանում է հիմնադրամի խորհուրդը:

Հոդված 29. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունումը

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից երկու շաբաթվա ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններն ընդունում են սույն օրենքից բխող այն ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը, որոնց ընդունումը սույն օրենքով վերապահված է այդ մարմիններին:

Հոդված 30. Դրոշմանիշային վճար վճարելու պարտականության ծագման սկիզբը

1.Սույն օրենքով սահմանված դրոշմանիշային վճար վճարելու պարտականությունը ծագում է 2017 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 31. Այլ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա ընթացքում հիմնադրամի պատշաճ գործունեությունն ապահովվում է Կենտրոնական բանկի աշխատակիցների միջոցով՝ հասարակական հիմունքներով: Սույն մասում նշված ժամկետում հիմնադրամը չի կարող կատարել սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում և 22-րդ հոդվածի 3-րդ մասում նշված ծախսերը, բացառությամբ հիմնադրամի միջոցների կառավարումն արտաքին մասնագիտացված կառավարչին հանձնելու հետ կապված ծախսերի: Սույն մասի դրույթները չեն տարածվում խորհրդի գործունեության ապահովման հետ կապված հարաբերությունների վրա:

Հոդված 32. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրվանից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Ազգային ժողովի կողմից 1-ին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Հ/հ	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
1.	ՀՀ կառավարություն	1. Նախագծի 1-ին հոդվածում «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «սահմանվում են» բառերը:	1. Ընդունվել է:
		2. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում հստակեցնել «միլիոն դրամով» հաշվարկվող գումարների ձևակերպումները՝ թողնելով կամ միայն թվային տարբերակը, կամ թիվն արտացոլել բառի («միլիոն») միջոցով:	2. Ընդունվել է, մասը խմբագրվել է:
		Նախագծի 4-րդ հոդվածում սահմանված են հատուցման գումարների չափերը, մինչդեռ նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը պարունակում են դրույթներ հատուցման գումարների վճարման կարգի վերաբերյալ: Այս առումով հիշյալ դրույթներն նախատեսել նախագծի 5-րդ հոդվածում, որը վերաբերում է հատուցման գումարների վճարման կարգին:	Ընդունվել է, 2-րդ գլխի և 4-րդ հոդվածի վերնագրերն ու հոդվածի 5-րդ մասը փոփոխվել են:
		3. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ համապատասխան պետական մարմինը որոշում է *տվյալ հատուցման դեպքի համար վճարման ենթակա հատուցման գումարի*	

		չափը՝ հիմք ընդունելով սույն օրենքի դրույթները: Մինչդեռ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հատուցման գումարի չափերն արդեն իսկ սահմանված են սույն օրենքով: Այս առումով նախագծի հիշյալ դրույթներն անհրաժեշտ է լրամշակել, քանի որ ենթադրվում է, որ տվյալ դեպքում խոսքը գնում է համապատասխան պետական մարմնի կողմից հատուցման դեպքի որոշման մասին:	3. Ընդունվել է, 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը հանվել է, իսկ «բ» և «գ» ենթակետերը խմբագրվել են:
		4. Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասի կապակցությամբ նկատի ունենալ, որ որոշ դեպքերում շահառուների կողմից ստացված հատուցման գումարները հնարավոր չի լինի հետ վերադարձնել վերջիններիս կողմից, քանի որ նրանք կարող են լինել կենսաթոշակառուներ, հաշմանդամներ կամ սոցիալապես անապահով անձինք և այլն: Գտնում ենք, որ այդ դեպքերում պետք է անմիջապես դադարեցվի հատուցման գումարների վճարումը և նշված գումարները վերադարձնելու պարտականությունը դրվի համապատասխան զինծառայողի վրա:	4. Ընդունվել է գումարների վճարման դադարեցման մասով, իսկ գումարները զինծառայողի կողմից վերադարձնելու հարցը լուծված է նույն հոդվածի 5-րդ մասում՝ դատարանի կողմից զինծառայողի նկատմամբ համապարտ պարտականություն սահմանելու միջոցով:
		5. Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասում վերանայել կետերի համարակալումը և «3» թիվը փոխարինել «2» թվով:	
		6. Նախագծի 7-րդ հոդվածը վերաբերում է հատուցման գումար ստանալու իրավունք ունեցող անձանց որոշմանը, որտեղ նախատեսված են դրույթներ, համաձայն որոնց՝ զինծառայողի զոհվելու (մահանալու) կամ զինծառայողին անհայտ բացակայող ճանաչելու դեպքում *շահառուների միջև համաձայնության բացակայության դեպքում* վճարման ենթակա *հատուցման գումարը հավասարաչափ բաժանվում է շահառուների միջև և վճարվում է իրենցից յուրաքանչյուրին առանձին:* Նկատի ունենալով, որ պրակտիկայում կարող են առաջանալ շահառուների միջև համաձայնության բացակայությանը վերաբերող վիճելի կամ բարդ դեպքեր, գտնում ենք, որ նման բնույթի դեպքերում հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը պետք է սահմանի համապատասխան ընթացակարգեր, որոնցով կկարգավորվեն հատուցման գումարները շահառուների միջև բաշխելու հետ կապված հարցերը և միաժամանակ կապահովվի անհա-	5. Ընդունվել է: 6. Ընդունվել է, հոդվածի կիրառման նպատակով ՀՀ կառավարության կողմից սահման-

		տական մոտեցում յուրաքանչյուր հատուցման դեպքի համար: 7. Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «գրանցված» բառը փոխարինել «հաշվառված» բառով: 8. Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն ֆիզիկական անձը միաժամանակ աշխատում է աշխատանքային պայմանագրով և հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, նոտար և (կամ) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով ստանում է եկամուտ, ապա այդ ֆիզիկական անձը կրում է *նշված յուրաքանչյուր հիմքով դրոշմանիշային վճար վճարելու առանձին պարտականություն*: Մինչդեռ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նույն ֆիզիկական անձն աշխատանքային պայմանագրով աշխատում է մեկից ավելի գործատուի մոտ, ապա այդ ֆիզիկական անձը *դրոշմանիշային վճար է վճարում միայն մեկ գործատուից ստացվող եկամուտներից*: Այս առումով պարզ չէ, թե ինչու է մի դեպքում դրոշմանիշային վճար վճարելու պարտականությունը դրվում յուրաքանչյուր հիմքի դեպքում առանձին, իսկ մյուս դեպքում՝ ֆիզիկական անձը կրում է պարտականություն դրոշմանիշային վճար վճարել միայն մեկ գործատուից ստացվող եկամուտներից: 9. Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ այլ անձանց փոխարեն դրոշմանիշային վճարները վճարվում են տվյալ անձանց աշխատավարձ վճարող գործատուի կողմից՝ իր միջոցների հաշվին: Այս առումով հստակեցնել, թե սույն օրենքի իմաստով ովքեր են հանդիսանում «այլ անձինք»: 10. Նախագծի 18-րդ հոդվածի 4-րդ մասում «օրենսդրությամբ» բառը	վելու է կարգ: 7. Ընդունվել է: 8. Ընդունվել է, 11-րդ և 12-րդ հոդվածները խմբագրվել են:

		փոխարինել «օրենքով» բառով: 11. Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բովանդակությունը չի համապատասխանում այդ մասի բովանդակությանը: Այդ առումով նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել նույն հոդվածի 4-րդ մասում: 12. Նախագծի 20-րդ հոդվածում 4-րդ մասից հետո վերանայել մասերի համարակալումը: 13. Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի դրույթները՝ նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2. Հոգաբարձուների խորհուրդը կազմված է ինն անդամից: 1) Հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակում է՝ ա. երեքին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը. բ. երեքին՝ Կենտրոնական բանկի խորհուրդը. 2) Հոգաբարձուների խորհրդի երեք անդամներին ընտրում են հոգաբարձուների խորհրդի նշանակված անդամները: Հոգաբարձուների խորհրդի անդամները նշանակվում (ընտրվում) են հինգ տարի ժամկետով:»: 14. «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն՝ նախագծի 27-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝	9. Ընդունվել է, 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը խմբագրվել է: 10. Ընդունվել է: 11. Ընդունվել է:

		«**Հոդված 27. Հիմնադրամի ստեղծումը** 1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից երկու շաբաթվա ընթացքում կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է հիմնադրամ ստեղծելու մասին որոշում, հաստատում է հիմնադրամի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ապահովում է հիմնադրամի պետական գրանցումը. 2. Հիմնադրամի պետական գրանցման օրվանից մեկ ամսվա ընթացքում սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պետական մարմինները և հասարակական կազմակերպությունները նշանակում են խորհրդի իրենց անդամներին: 3. Եթե հիմնադրամի պետական գրանցման օրվանից մեկ ամսվա ընթացքում սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նշված հասարակական կազմակերպությունները չեն նշանակում խորհրդի կազմում իրենց անդամներին կամ դրանցից մեկին՝ ապա չնշանակված անդամներին (անդամին)՝ սույն մասում նշված՝ մեկամսյա ժամկետը լրանալու օրվանից 10 օրվա ընթացքում նշանակում են խորհրդի՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված անդամները: 4. Հիմնադրամի խորհրդի բոլոր անդամներին նշանակելու օրվանից երկու շաբաթվա ընթացքում՝ 1) ընտրվում է խորհրդի նախագահը. 2) ընդունվում են այն բոլոր իրավական ակտերը, որոնք սույն օրենքի համաձայն ենթակա են ընդունման խորհրդի կողմից. 3) կատարվում են հիմնադրամի այն բոլոր պաշտոնատար անձանց նշանակումները և ձևավորվում են հիմնադրամի այն բոլոր մարմինները, որոնց նշանակումը կամ ձևավորումը սույն օրենքի համաձայն վերապահված է խորհրդի իրավասությանը: 5. Հիմնադրամի պետական գրանցման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում կենտրոնական բանկը հիմնադրամի անունով բացում է Հիմնադրամի սույն օրենքով սահմանված բանկային հաշիվները և Հիմնադրամին փոխանցում է սույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված գումարը:»: 15. Օրենքի ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա նաև «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը լրացնել 7-րդ մա-	12. Ընդունվել է: 13. Ընդունվել է, 2-րդ մասը խմբագրվել է: 14. Ընդունվել է:

		սով՝ հետևյալ բովանդակությամբ. «7. Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի իրավական կարգավիճակի, հիմնադրման, կառավարման մարմինների, կանոնադրության, հիմնադրամի և վերջինիս կառավարման մարմինների իրավունքների և պարտականությունների, հիմնադրամի լուծարման, հիմնադրամի միջոցների, այդ թվում՝ վարչակառավարչական ծախսերի առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Սույն օրենքի դրույթները տարածվում են Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի վրա, եթե «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այլ բան սահմանված չէ: 16. Օրենքի նախագծի ընդունման պարագայում նշված օրենքի ամբողջական կիրառումն ապահովելու նպատակով անհրաժեշտ նաև մի շարք այլ օրենքներում կատարել փոփոխություններ, մասնավորապես, - «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», - «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», - «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», - «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», - «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», - «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», - «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», - «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի	Հոդվածը խմբագրվել է:

		Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և - «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:	15. Ընդունվել է:

			16.Ընդունվել է: Նախագծերի փաթեթը լրացվել է նոր նախագծերով:
2.	Հեղինե Բիշարյան	1. 1-ին հոդվածում «մարտական գործողությունների հետևանքով» բառերը փոխարինել «ծառայության ընթացքում» բառերով:	Չի ընդունվել: Օրենքի նախագծի նպատակն է ապահովա-

			գրական համակարգ կիրառել այն անձանց նկատմամբ ում կյանքը և առողջությունը անմիջական ռիսկի են ենթարկվում մարտական գործողություններին մասնակցելու արդյունքում:
3.	Իշխան Խաչատրյան Միեր Շահգելդյան	Օրենքի նախագծի դրույթները տարածել նաև Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության քաղաքացիական պաշտպանության այն ստորաբաժանումների վրա, որոնք մասնակցում են սահմանամերձ տարածքներում հակառակորդի դիվերսիոն հետախուզական խմբերի դեմ պայքարին, մարտական գործողությունների և զենքի կիրառման հետևանքներից բնակչության պաշտպանությանը:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նախատեսվել են նաև տարածքային պաշտպանությանը ներգրավված ու մարտական գործողություններին մասնակցած անձինք:
4.	Արտակ Դավթյան	1. 26-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Հիմնադրամի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կենտրոնական բանկը, որն իր տարեկան հաշվետվության կազմում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում նաև հաղորդում՝ Հիմնադրամի գործունեության վերահսկողության արդյունքների մասին:», 2. 26-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ կենտրոնական բանկին վերապահված լիազորությունով պայմանավորված համապատասխան լրացում կատարել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ և 39.1-րդ հոդվածներում:	Չի ընդունվել: Գտնում ենք, որ Հիմնադրամի գործունեության վերահսկողության արդյունքների մասին հաղորդումը Կենտրոնական բանկի տարեկան հաշվետվության կազմում ներառելու անհրաժեշտություն չկա, քանի որ Հիմնադրամը չի հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկի ակտիվ:
5.	Հովհաննես Մարգարյան	1. 4-րդ հոդվածում ամրագրված փոխհատուցման գումարները դարձնել հավասար բոլոր զինծառայողների համար, անկախ նրանից զինծառայողը սպայական կազմից է, թե շարքային կամ ժամկետային է, թե պայմանագրային, պետք է փոխհատուցումը հավասար լինի:	1. Չի ընդունվել, քանի որ հատուցման գումարների տարբերության հիմքում դրված է ՀՀ օրենսդրությամբ զինծառայողների համապատասխան կազմերի դրամական ապահովության չափերի տարբերության սկզբունքը: 2. Չի ընդունվել: Հիմնադրամ մուտքագրված

		2. Օրենքի նախագծում սահմանել նորմ, ըստ որի ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ֆոնդերին փոխանցված գումարները կրկնապատկվում են ՀՀ պետական բյուջեի միջոցներով:	գումարները ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կրկնապատկելու անհրաժեշտությունը բացակայում է:
6.	Նաիրա Զոհրաբյան	Նախագծի 12-րդ հոդվածում՝ 1. Դրոշմանիշային վճարներ վճարող քաղաքացիների ցանկը խմբագրման կարիք ունի: Կարծում եմ դրոշմանիշային վճար վճարելու պարտականությունից պետք է ազատվեն. ա) զոհված զինծառայողների ընտանիքները բ) պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զորակոչիկների ընտանիքները գ) ապրիլյան պատերազմի ընթացքում զոհված կամ հաշմանդամություն ստացած զինծառայողների կամ նրանց ընտանիքների անդամները դ) հարյուր հազար դրամը չգերազանցող աշխատավարձ ստացող ՀՀ քաղաքացիներ հանդիսացող ֆիզիկական անձինք 2. դրոշմանիշային վճարները պետք է գանձվեն հետևյալ համամասնությամբ. ա) հարյուր հազարից երկու հարյուր հազար դրամ աշխատավարձ ստացող ՀՀ քաղաքացիներ հանդիսացող ֆիզիկական անձանցից՝ 1000 դրամ բ) հարյուր հազարից հինգ հարյուր հազար դրամ աշխատավարձ ստացող ՀՀ քաղաքացիներ հանդիսացող ֆիզիկական անձանցից՝ 2000 դրամ գ) հինգ հարյուր հազար և ավելի դրամ աշխատավարձ ստացող ՀՀ քաղաքացիներ հանդիսացող ֆիզիկական անձանցից՝ 5000 դրամ:	1. Ընդունվել է մասամբ՝ «ա» և «բ» կետերի մասով, որի հիման վրա նախագծի 12-րդ հոդվածում նախատեսվել է, որ նշված անձինք իրավունք ունեն հաշվետու տարվա ավարտից հետո դիմել Հիմնադրամին՝ հաշվետու տարվա ընթացքում իրենցից պահված հատուցման գումարները հետ վերադարձնելու համար: 2. Չի ընդունվել, քանի որ նախագծի 10-րդ հոդվածի համաձայն դրոշմանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է և անձի կողմից աշխատավարձի միջոցով ստացված եկամտի չափի հետ առնչություն չունի:
7.	Վահրամ Մկրտչյան	1. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասում «ոստիկանությունը»	1. Ընդունվել է:

		բառից հետո ավելացնել «կամ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը» բառերը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ փրկարար ծառայությունը նույնպես կարող է մասնակցել մարտական գործողությունների: 2. Ըստ նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ մասի, եթե նույն ֆիզիկական անձն աշխատանքային պայմանագրով աշխատում է մեկից ավելի գործատուի մոտ ապա այդ անձը դրոշմանիշային վճար է վճարում միայն մեկ գործատուից ստացվող եկամուտներից: Մինչդեռ նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ «Եթե նույն ֆիզիկական անձը միաժամանակ աշխատում է աշխատանքային պայմանագրով և հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, նոտար և(կամ) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերով ստանում է եկամուտ, ապա այդ ֆիզիկական անձը կրում է նշված յուրաքանչյուր հիմքով դրոշմանիշային վճար վճարելու առանձին պարտականություն»: Կարծում եմ նշված հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի տրամաբանությունն իրար հակասում են: Հետևաբար առաջարկում եմ կամ նախագծում հստակ ամրագրել, որ յուրաքանչյուր վճարովի աշխատանքից վճարվում է դրոշմանիշային վճար, այսինքն հիմք ընդունել է 2-րդ մասի տրամաբանությունը կամ նախագծում հստակեցնել, որ յուրաքանչյուր անձ, պարտադիր կարգով, դրոշմանիշային վճար է վճարում միայն մեկ վճարովի աշխատանքի դիմաց, այսինքն հիմք ընդունել է 3-րդ մասի տրամաբանությունը:	5-րդ հոդվածը խմբագրվել է: Ընդունվել է: 12-րդ հոդվածում նախատեսվել է, որ դրոշմանիշային վճար է վճարում միայն մեկ գործունեության շրջանակներում:
8.	Աղվան Վարդանյան	1. 21-րդ հոդվածի 2-րդ մասում «0.5 տոկոսը» փոխարինել «0.3 տոկոսը» բառերով:	1. Չի ընդունվել: Նշված հոդվածում խոսքը գնում է վարչական ծախսերի մասին, որոնք նախագծի 31-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների համաձայն 5 տարվա ընթացքում չեն իրականացվելու (բացառությամբ արտաքին մասնագիտացված կառավարչի հանձնման դեպքում կատարվող ծախսերի):

		2. 22-րդ հոդվածի 3-րդ մասում «2 տոկոսը» փոխարինել «1,5 տոկոսը» բառերով: 3. 23-րդ հոդվածի 2-րդ մասում «երեքից յոթ» բառերը փոխարինել «հինգ» բառերով: 4. 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը ձևակերպել հետևյալ խմբագրմամբ «երեքին՝ ընտրում են հոգաբարձուների խորհուրդի անդամները որոնցից՝ երկուսին առաջարկում է խորհրդարանական ընդդիմությունը,	2. Չի ընդունվել: Գտնում ենք, որ Հիմնադրամի միջոցների պատշաճ կառավարումն ապահովելու նկատառումներից ելնելով նպատակահարմար է, որպեսզի գործադիր հանձնաժողովի անդամները և արտաքին մասնագիտացված կառավարիչը ստանան պատշաճ վարձատրություն: 3. Չի ընդունվել: Խոսքը գնում է գործադիր հանձնաժողովի անդամների թվի մասին, որի կապակցությամբ գտնում ենք, որ համապատասխան որակավորում ունեցող անձանց առկայությունը կնպաստի Հիմնադրամի պատշաճ գործունեության ապահովմանը: 4. Կատարված փոփոխության արդյունքում նախատեսվում է, որ նշված երեք անդամներին ընտրում են զինծառայողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները: Խորհրդակցական ձայնի իրավունքով հոգաբարձուների խորհրդի նիստերին մասնակցության նախատեսումը գտնում ենք ոչ նպատակահարմար: 5. Չի ընդունվել: Նախագծի 10-րդ հոդվածի համաձայն դրոշ-

		մեկին՝ խորհրդարանական իշխանությունը»: 24-րդ հոդվածի 2-րդ մասում ավելացնել 4) կետ (կամ առանց կետի նոր պարբերություն) հետևյալ բովանդակությամբ՝ «4) սփյուռքի համահայկական կազմակերպությունների 3 ներկայացուցիչ կարող են խորհուրդի նիստերին մասնակցել խորհրդակցական ձայնով»: 5. Առաջարկում ենք նաև քննարկել վճարման ենթակա հատուցման գումարի չափը սահմանել հետևյալ սանդղակով. նվազագույն աշխատավարձից բարձր, բայց մինչև 100 հազար վարձատրության դեպքում՝ 500 դրամ, 100-ից 200 հազարի դեպքում՝ 1000 դրամ, 200-ից 500 հազարի պարագայում՝ 2000 դրամ, 500 հազարից բարձր՝ 5000 դրամ:	մանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է և անձի կողմից աշխատավարձի միջոցով ստացված եկամտի չափի հետ առնչություն չունի:
9.	Էդմոն Մարուքյան	1. Առաջարկում եմ նախագծից հանել դրոշմանիշային վճարներին և դրանք վճարող անձանց վերաբերող դրույթները, քանի որ նախագծի 11-րդ հոդվածով սահմանվող անձինք այժմ էլ իրենց ուղղակի և անուղղակի հարկերի միջոցով վճարում են թե՛ բանակի, թե՛ պետական, այդ թվում նաև՝ զինվորական կենսաթոշակների համար: Նախագծով առաջարկվող հատուկ հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) միջոցների հավաքագրման համար գոյություն ունեն այլ աղբյուրներ, որոնք կլինեն անհամեմատ ավելի եկամտաբեր և արդարացի: Մասնավորապես. 1) Պետական եկամուտների կողմից հիմնադրված Դիլիջանի ուսումնական կենտրոնը վաճառել և գոյացած միջոցները փոխանցել Հիմնադրամին: Այլ դեպքում կենտրոնի շենքը կարող է տրվել վարձակալության, իսկ վարձավճարն ուղղվել Հիմնադրամի միջոցների համալրմանը: 2) Ճանապարհային երթևեկության կանոնների և կարմիր գծերի խախտման տուգանքներն ամբողջությամբ փոխանցել Հիմնադրամին: Ընդ որում, ոստիկանության և առհասարակ կառավարության ու կառա-	1. Չի ընդունվել, քանի որ օրենքի նախագծում խոսքը գնում է ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճարի միջոցով ապահովագրական համակարգի ստեղծման մասին:

		վարությանն առընթեր ուռճացված կառույցները կրճատելու հաշվին ևս կգոյանան հավելյալ միջոցներ, որոնք կարող են ուղղվել պաշտպանության ոլորտին: Մինչդեռ, Նախագծով առաջարկվող լուծմամբ՝ տարեկան հավաքագրվելու է 4.5-5 մլրդ ՀՀ դրամ: 2. Առաջարկում եմ նախագծի անցումային դրույթներում սահմանել, որ օրենքն ունի հետադարձ ուժ՝ մինչև 1994 թվականը ներառյալ, քանի որ մենք ունենք զոհված զինծառայողների բազմաթիվ ընտանիքներ և հազարավոր զինհաշմանդամներ, և որևէ կերպ չի կարող արդարացի համարվել խտրականությունը նրանց նկատմամբ:	2. Չի ընդունվել: Գտնում ենք, որ խտրականության դրսևորում առկա չէ: Օրենքի նախագծում խոսքը գնում է ապահովագրական համակարգի ստեղծման միջոցով զինծառայողների և համապատասխան անձանց կյանքին և առողջությանը հասցված վնասի հատուցման մասին: Միաժամանակ, օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում նախատեսվում է, որ հիմնադրամի ֆինանսական գործունեության արդյունքներից ելնելով հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կարող է կայացնել որոշում՝ իր կողմից սահմանված որոշակի եղանակներով (դրամական միջոցների վճարում, բնամթերային ձևով օգնություն, այլ եղանակ) և ժամկետներում հատուցում վճարել նաև հատուցման այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը:

		3. Հիմնվելով պետության պոզիտիվ պարտականության վրա՝ առաջարկում եմ նախագծի 2-րդ հոդվածում բացի այն զինծառայողներից, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել մարտական գործողությունների հետևանքով, շահառուների կազմում ներառել նաև այն զինծառայողներին, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է հասցվել խաղաղ պայմաններում և ոչ իրենց կողմից կատարված հանցագործության հետևանքով:	3. Չի ընդունվել, քանի որ օրենքի նախագծի նպատակն է ապահովագրական համակարգ կիրառել այն անձանց նկատմամբ ում կյանքը և առողջությունը անմիջական ռիսկի են ենթարկվում մարտական գործողություններին մասնակցելու արդյունքում:
10.	Թևան Պողոսյան	1. Տվյալ նախագիծը հղկելու և բարելավելու համար անհրաժեշտ է հանրային քննարկումների ընդլայնում: Առաջարկում եմ նախագծի երկրորդ լսումները իրականացնել դեկտեմբերի 18-ից ոչ շուտ. դրանով իսկ ապահովել մինիմալ երկշաբաթյա ժամկետ հանրային ավելի լայն լսումներ իրականացնելու համար: Կարևորում եմ նաև նկատի ունենալ մարդու իրավունքների պաշտպանի եզրակացությունը: 2. Անհրաժեշտ միջոցների հավաքագրման հետ կապված կարծում եմ հնարավոր է, և ավելի նպատակահարմար եկամտահարկի ոլորտից տեղափոխել գույքահարկի ոլորտ, և անհրաժեշտ գումարը հավաքագրել գույքահարկի ավելացմամբ: Գույքահարկի ավելացման պարագայում հարկումը կլինի գույքի արժեքին համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ: Գույքահարկի օբյեկտների շրջանակը ավելի լայն է քան շահութահարկինը, այդպիսով ապահովվում է ազգ-բանակի ավելի սերտ կապ: 3. Հարկ եմ համարում անդրադառնալ օրենքի նախագծի հետադարձ ուժ չունենալու հարցին: 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հատուցման գումարները վճարվում են հատուցման այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել 2017թ. հունվարի 28-ից հետո: Ինչպես նաև նույն հոդվածի 5-րդ կետի 2-րդ մասի համաձայն հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կարող է կայացնել որոշում իր կողմից սահմանված որոշակի	1. Օրենքի նախագիծն իրոք անցել է հանրային լայն քննարկումներ և լրամշակման արդյունքում հաշվի են առնվել նաև այդ քննարկումների շրջանակներում ներկայացված առաջարկությունները: 2. Նախագծի 10-րդ հոդվածի համաձայն դրոշմանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է և անձի կողմից վճարվող եկամտահարկի կամ գույքահարկի հետ առնչություն չունի: 3. Չի ընդունվում, քանի որ օրենքի նախագծի նպատակն է ներդնել ապահովագրական համակարգ, որը գործելու է օրենքի ուժի մեջ

		եղանակներով (դրամական միջոցների վճարում, բնամթերային ձևով օգնություն, այլ եղանակ) և ժամկետներում հատուցում վճարել նաև հատուցման այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել մինչև 2017թ. հունվարի 28-ը: Ի սկզբանե առավել հակված ենք, որ օրենքը ամբողջապես ունենա հետադարձ ուժ քանի որ մինչ օրս Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կյանքին կամ առողջությանը վնասներ կրած զինծառայողները և նրանք ովքեր որ կկրեն 2017թ. Հունվարի 28-ից պետք է օգտվեն նույն իրավունքներից: Բացի այդ, այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել մինչև 2017թ. հունվարի 28-ը հատուցման որոշման ընդունման հետ կապված անհրաժեշտ է մեխանիզմը հստակեցնել և պարզեցնել: 4. Հատուցման սուբյեկտ պետք է լինեն նաև միջազգային խաղաղապահ առաքելություններ իրականացնող զինծառայողները: 5. Պարզեցնել լուծումները այն հարցի առընչությամբ, թե եթե վնասը հատուցվողի հաշմանդամության կարգը փոխվելու դեպքում, վերջինիս տրվող դրամական փոխհատուցումը փոփոխության ենթարկվում է թե	մտնելու օրվանից: Ինչ վերաբերում է մինչև օրենքի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած դեպքերի համար հատուցմանը, ապա այն իրականացվելու է հիմնականում օգնության սկզբունքով՝ կապված Հիմնադրամի ֆինանսական հնարավորությունների հետ: 4. Կարևորելով ներկայացված առաջարկությունը, միաժամանակ հայտնում ենք, որ միջազգային խաղաղապահ առաքելություններին մասնակցող զինծառայողների գործունեությունը չի ընդգրկում մարտական գործողություններին մասնակցությունը: Նշված զինծառայողների կյանքին և առողջությանը հասցված վնասի հատուցումն իրականացվում է համապատասխան ՀՀ կառավարության որոշմամբ:

		ոչ և ենթարկվելու դեպքում ինչ փոփոխության է ենթարկվում: Առաջարկում ենք կարգը տալուց հետո 10 տարվա ընթացքում փոփոխության չենթարկել: 6. Քննության վերահսկողության հետ կապված հստակ մեխանիզմներ մշակել պարզելու արդյոք վնասը հատուցման ենթակա է թե ոչ: Քննության թափանցիկությունը ապահովելու և վստահություն ներշնչելու նպատակով վերահսկողական մարմին կարող է հանդիսանալ օրինակ ՀՀ Աժ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը:	5. Ընդունվել է մասամբ, նախագծի 4-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում հստակեցվել են հատուցման վճարը նշանակելուց հետո նույն զինծառայողի կապակցությամբ տեղի ունեցած հատուցման նոր դեպքի կապակցությամբ շահառուին (շահառուներին) վճարվող գումարների չափերի հաշվարկման կարգը: 6. Անձի կյանքին և առողջությանը հասցված վնասի յուրաքանչյուր դեպքով ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կարգով հարուցվում է քրեական վարույթ և դեպքի որակումն իրականացվում է քրեական վարույթի շրջանակներում: Բացի այդ, համապատասխան հանգամանքներում անհայտ կորելու դեպքում անձին անհայտ բացակայող ճանաչելու իրավասությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով վերապահված է դատարանին: